

նէին իշխանութիւն սահմանելոյ և հրամայելոյ: Աւստի յայտ է թէ՛ իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցին, պարտի հետեւիլ իմաստասիրական բարբառոյ ժողովոյն իւրոյ: Աւել ալս զանազանութիւնս իմաստասիրական բառից և կերպից խօսելոյ, ոչ բառնայ զմիութիւն Աթոռեղեկէ և ընդհանրական եկեղեցւոյն. որ մէք ցուցաք յայտնապէս թէ՛ ի միութիւն Աթոռեղեկէ եկեղեցւոյն հարկաւոր է միաբանութիւն հաւատոյ: Վանզի անհնար է միութիւն իմաստասիրական բառից սյսքան զանազան ազգաց:

Յայս ամենայն վերոյգրեալ բանիցս յայտնի լինի թէ՛ ով որ ոչ հետեւի իմաստասիրական բառից եկեղեցւոյն իւրոյ, նա ապստամբ է և անհնազանդ եկեղեցւոյն իւրոյ, և արժանի է բանադրանաց Հայրապետաց և Առաջնորդաց եկեղեցւոյն իւրոյ: Աւել թէ անդարձ մնայ ի ներքոյ այս բանադրանացս, այնպիսին որոշի յեկեղեցւոյն Վրիստոսի, և մասն և բաժին ընդ հեթանոսաց ընդունի. որպէս և ասէ Տէրըն մեր՝ թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսս և զմաքսաւորս:

Օգոյշ լեր ուրեմն եղբայր՝ և ի բոց ձգեա՛ այսուհետև զհպարտութիւն մտաց քոց. ջանա՛ փրկել զհոգիդ քո հնազանդելով եկեղեցւոյդ քո: Օրհնչ օգուտ է քեզ եթէ զաշխարհս ամենայն շահեսցես և զանձն քո տուժեսցես. զինչ շահ է քեզ հակառակելովդ ի վերայ փիլեսոփայական բանից իմաստուն և աստուածաբան երևիլ. սակայն ապստամբելովդ ընդդէմ եկեղեցւոյդ քո, զհոգիդ կորուսանես:

Մի ասեր թէ՛ կան ևս քանի ժողովք Հայոց՝ որք սահմանեցին ասել Վրիստոսի թիւն ի Վրիստոսս, և զայլ սոցին նման բանս. քանզի այն ժողովքն ոչ են եկեղեցւոյդ քո, որովհետև եկեղեցիդ ոչ ընդունի: Օրհնչ որպէս և Հոռոմք և Աթինք ժամանակիս այսմիկ ոչ են պարտական հետեւիլ երկրորդ ժողովոյն Ափեսոսի, և այլ բազում ժողովոց՝ զոր ոչ ընդունին եկեղեցիք նոցա. նմանապէս և Հայք ոչ են պարտական հետեւիլ այնմ ժողովոցն, զոր Հայոց եկեղեցին ոչ ընդունի, այլ միայն պարտին հետեւիլ ժողովոցն այնց՝ զոր ընդունի եկեղեցին իւրեանց: Ապէս պարտիս հետեւիլ և դու՛ եթէ կամիս հրնազանդել եկեղեցւոյդ քո. ապա թէ ոչ՝ զիտեա՛ սոուզիւ՝ որ կատարելոց է ի քեզ այն զարհուրելի բանն՝ որ ասէ՛ թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսս և զմաքսաւորս, յորմէ փրկեալ ազատեսցէ զամենայն հաւատացեալս իւր Տէրն մեր Արիստուս Վրիստոսս, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹՎԻՆ

ԱՆՅԻՑ ԱՆՅԵԼՈՑ ՍԷՎԱՆԱՅ ՎԱՆԻՑ.
(Ն-բ-ռ-ւ-ի-ւ-ի-ւ-ն):

ԳՎՈՒԻ Ժ.

Համառօտ Ժանօրէն-իւն պարմաբանիս.

Մինչ զայստեամբս իմով ծանեայ զաստուածահաճոյ գեղիցիկ վարս հարցն Ավանու, վառեալ սէր իմ յարակցութեանց

սոցա՝ սկսայ զելս հնարից որոնել՝ որ ըզվախճանական դադար կենաց իմոց սստ ունիլ կարացից: Վանզի ի կողմանցն՝ Վրբիմու, ուր առաքեալ է յառաջագոյն, զվաթսուն և երկու ընտիր ձեռագիր մատեանս՝ ընդ ութն ձեռնասուն որդւոց իմոց, առ վեհագնեայ Աղայ Յովակիմի Համալսարանն ի Մոսկով: Աւ զմնացեալ հարիւր, քսան և հինգ զուպեալ և զձեռագիր մատեանն, զորս բերեալ էի ընդ իս ի Վրիմու Աջմիածին: Աւ տեսանելոյն իմ, թէ՛ հեռացեալ է ի սուրբ Աջմիածնայ նախահոգութիւն, զորոց եթէ յաջողեցէ Տէր՝ յատուկ յանձնական պատմութեան իմում ունիմ պարագայիւք զբել, աստ միայն զհարկաւորսն տեղոյս ծանուցից:

Բարեւոք համարեցայ, թէ՛ զգրեանն իմ և թէ՛ զայլ ինչս հասուցանել ի Սեվան, իբր ի գանձարան Աստուծոյ, վասնորոյ յանցեալ թիւ 1829. ՌՄՀԸ. Նոյեմբերի մէկ. հանդերձ ցուցակաւն առաքեցի զմատեանն իմ աստ ի Սեվան, որ ի կարգս տումարագրութեան սոյն օրագրութեանս, ունիմք ըստ կերպին գրել: Բայց մեր տակաւին մնացեալ յանդամակցութեան Սինօղականացն Աջմիածնի, հագել յայս թիւ փետր. 25. Ելեալ յանդամակցութենէ նոցա, գնացի նախ ի սուրբ Խորվիրայ, և ապա յուլիս ամսոյ մէկն 1830 ՌՄՀԹ. եկի ի Սեվան ամենայն աղիւք և ունեցելովք իմովք, և մէկ հարազատ սպասաւոր Աւդոնիացի Յովհաննէս պետրոսեանիւ:

Աւ աստ յորդորական ասարկութեամբ նախախիշեալ սրբակրօն Յովհաննէս Առաջնորդի, հարկեցայ՝ զանցսն սուրբ Անապա-

տիս ի գիր արձանացուցանել, ընդ նոսին և զմշտնջենական յիշատակին, աստ յօրագրութեանս կարևոր պարագայիւք ցուցանել, զի թէ՛ նիւթականքն ըստ հոյովման ժամանակաց անհետացին, գոնէ ջերմեռանդ մատուցողաց եռանդքն առ Աստուած՝ անշիջանելի գոլոյ նշանքն աստ երեւելով, և այլոց ապագայ բարեպաշտից առատաձեռնութեան յորդորք լինիցին:

Վասնորոյ արժան համարեցաք՝ յետ այսորիկ զիշատակելինն դասաւորել կարգաւ, նախ զԱշկեղեցական սրբութիւնն, երկրորդ՝ զանօթսն: Արրորդ՝ զանշարժ կայից զիշատակինն ամրական գրոց օրինակօրն: Աւ չորրորդ՝ զմատեանն յատկութեամբ, համարագրովք և մատուցողաց անուամբքն:

Իսկ զմնացեալ վաղանցիկ շարժական յիշատակինն, յայլում օրագրութեան կարգադրեալ եմք ի գրել, նոյնպէս զտարեկան զել և զմուտան, որք ո՛չ գոյին մինչև ցայժմ:

ԳՎՍԻԻ ԺԸ

Սբէր-Բէնէ և Ա՛նթ և Ա՛վան- սուրբ Անապատին, Բէ սուրբ և յո՞րոյ շնորհեցեալ էցեն:

Նախ յաւուրս սրբոյն Մաշտոցի, յամի Տեանն 874. և Հայոց ՅԳԻ, Աշոտ իշխանաց Աշխանն գայ յուլիս սուրբ Անապատիս, և ի վայելս օրհնութեան սրբոյն Մաշտոցի, բացի վեց զիւղեցն ի ժառանգութիւն աղօթաւորաց շնորհելոյն, որպէս ի անզւոջ իւրում յիշեցաք. այլ և՛ ըստ վկայութեան Վուկաս վարդապետի յօրինօղի զհին Հայաստանն, շնորհէ սոյն իշ-

խանաց Իշխան զփրկական նշան Աստուածընկայ խաչին Աէվանու Անապատին, որ է առաջին պրոյդ, ձիր և պարզե երկնառաք, որոյ շնորհօքն պահպանեն մենակեացքն յամենայն փորձութեանց զիւական շնչմանց:

Երկրորդ՝ որ հնազոյն աւանդութեամբ հռչակեալ կայ յազգ մեր վասն Թադէոս Առաքելոյն, թէ, զերկաթեայ տաշտն այն, յորում սուրբ Աստուածածինն՝ ըստ մայրական խնամոց սովորութեանն՝ լուանայր զերեխայացեալն զՔրիստոս, զնոյն տաշտն երեք Խաչ իւր ձեռամբն կազմեալ է Առաքեալն Թադէոս, յորոց զմինն նուաստ պատմարանս՝ յերկրին Ռուսաստանեայց, ի դուբնանին (ի նահանգին) Խէրսօնու ի Վրիգորիպօլ Հայոց քաղաք, ուր ես ինքս կացեալ եմ յաջորդ 16 տարի, և վայելի յիւրաքանչիւր տարի ի կայսերէն յանուն նոյն Վրիգորիպօլ քաղաքի վանուցն երեքական հարիւր ուրբի ոռձիկս: Յիշեալ զմի սուրբ նշանն անդ տեսեալ, երկրպագեալ, և յամենի հրաշքն եմ ականատեսս վկայ, ընդ իսներկայ Ափրեմ Աթողելոսն և Աերսէս Արքեպիսկոպոսն Աշտարակեցի որ ի 1808 թուականին Փրկչի գտանելով և նոցա անդ ի Վրիգորիպօլ, և զօրքն Ռուսոց զնային ի պատերազմք ի վերայ Օսմանցւոց, յիշեալ Աթողելոսն առեալ զնոյն երկաթեայ սուրբ նշանն, ի ձեռին և նովին օրհնեաց զզօրապեան և զզօրան, որք անցանէին ի քաղաքէն Վրիգորուպօլու:

Առ այն սուրբ նշան, յերկրէն Մոլտովայի մերազնեայք ի Տուպասար ասացեալ տեղին 24 կամ երբեմն 16 հատ քսան և չորս և տասն և վեց օր քառանթին պահելով՝ մեծ աւ ջերմեռանդութեամբ դան

յուխտ և յերկրպագութիւն, բազումք ժամանեալ բաղձանաց իւրեանց, վերադառնան ուրախութեամբ: Արպէս և Հրէայան դամալոյծ մի յաւուրս իմ եկեալ, մերով հրամանաւ մտեալ յեկեղեցին, զգիշերն օթագայեալ, յերկրորդ աւուրն զկնի Արբոյ պատարագի յերեսի քալ արտասուօք մատուցեալ երկրպագեալ հրէայն, և ի խաչալուայիցն օծեալ համեալ զանդամն իւր, նոյն ժամայն ակներև յեկեղեցին գտելոցս, սկսան շարժել երակքն և անդամքն, վասնորոյ հաւատացեալ նոյն հրէայն մկրտեցաւ, կնաւ, և երկու արու, տասն, և տասն և երկու ամեայ զաւակօքն, բոլորովին հոգւով և մարմնով առողջացեալք, փառաւորելով զԱստուած և ըզհրաշաքործ Սուրբ Աշանն նորին՝ գնացին ուրախութեամբ յերկիր իւրեանց ի Վիշնով քաղաք, ուր այժմ Աերսէս Աբրբազանն է Առաջնորդ:

Այն Սուրբ Աշան հռչակի այսպէս, թէ ի ցրուիլ Անի քաղաքին, բնակիչքն՝ որք ի Ղաիմ, ի Աէհաստան և ի Մօլտաւիայ սփռեցան, ի կողմն Վիլիու գնացող հայոց քահանայք, աթոռակալք և Արեսփոխանք, զհետ իւրեանց տարեալ են ի Վիլի քաղաք, և զկնի անցանել Հայոցն այնոցիկ ի սահմանս Ռուսաց յաւուրս Յովսէփ Արքեպիսկոպոսին Արղութեանց, տարեալ են և զՍուրբ Աշանն զայն ընդ ինքեանս ի Վրիգորիպօլ, ուր շինեալ զնոր քաղաք և զեկեղեցիս, եղեալ են յԱւագ եկեղեցին Ակատարինեայ:

Ընունաձք Սուրբ Խաչին է պարզ թխագոյն երկաթ, կէս Ռուսաց կանգնաչափ, առանց այլ ինչ զարդարանաց. ձեակերպութեամբն յարև նման աստ ի Աէ-

վան գտանեցեալ Սուրբ Աշանին, բաց յականց սորին, զինա զոչինչ զարդս ունի յինքեան, բայց ժողովուրդք զտուփ նորին զարմանալի ճարտարութեամբ, գեղեցիկ յօրինուածովք, սատաֆապատ արարեալ են. ամենայն վերապատուութեամբ պահպանեն զնա ի մէջ Ալեղեցւոյն, ի Սեղան սրբութեան, որպէս աստ ի Աէվան ունին ի Սուրբ Սեղանոջն:

Երդ լինելով իմ բազդաւոր, որպէս ի վերանդր գրեցաւ, որ ի 1828 օրոս. ամսոյն գալով իմ աստ ջերմեռանդ կարօտիւ մատուցի զուխտ և զերկրպագութիւն իմ երկրորդ Սուրբ Աշանիս այսորիկ, յայնում օրէ մինչև ցայժմ հետաքննին եմ գիտել զուստն սորին և կամ թէ երրորդն արդեօք ուր իցէ այժմ: Ա ասն սորին, որ գտանի ի Աէվան, զայս ի հնագունից ընկալայ զճանօթութիւն, զոր գրեմ արդ:

Ի նախկին Առսաւորչէ մերմէ ի Խաղէոս Եռաբերոյ ձեռակերտեալ յերից հըրաշալի յերկաթեայ խաչից և մինն որ աստ ի Աէվանէ, և կոչի Աթայ Սուրբ Ի աչ կամ Սուրբ Աշան, վասն լինելոյ նորա երբեմն ի կողմն Գեղարքունւոյ ի Աթանուանեալ գեղջ, ընդ ձեռամբ իշխանի Աթ գեղջ, յորմէ ելանէ իշխանաձուկն:

Վանդի յաւանդիւ ասացեալ լինի, թէ երբեմն ի գաւառն Աթայ մահտարաժամ պատահեալ, Իշխան գեղջն խնդրանօք զՍուրբ Աշանն տարեալ է անդ, և զկնի ապաքինութեան ախտին, բունի արգելեալ է ի գիւղն իւր Իշխանն զՍուրբ Աշանն, յերկար ժամանակ, որով կոչեցեալ է Աթայ Սուրբ Աշան, ապա առաջնորդ ժամանակին գնացեալ, իբր բռնի առեալ և բերեալ է ի Աւանս Արօնաւորաց:

Վարնեալ ի ժամանակս Էամախեցի Յակոբ Աթողիկոսի տարեալ են զայս Սուրբ Աշան Աջմիածին, զի մի մնացէ ի միթարութիւն ոլորմելի վասն Վրիստոսի կամաւոր աղքատացելոցն, որպէս սովորութիւն է Սուրբ Աջմիածնի կատավարչոցն զայլ վանօրայսն խափանել, զի մի միայն Աջմիածինն փայլեցի, ոչ թէ զըպրութեամբ և խմաստից շնորհօք, այլ հարստութեամբ և սուրբ մասանց կուտակմամբքն: Ա ասնորոյ զՍուրբ Առսաւորչայ Աջն ի Խոր Ա իրապու՝ զՍուրբ Յակովբայ Աջն յԱրկուուոյ, և զՍուրբ Գեղարդն ի բուն վանուց իւրոց, և զՆիփսիմեանց Սասունսն ամրափակեալ են ի մէջ Աթոռոյն և զիսկ վանսն նոցին, որպէս գերձիթս մրգապահաց թողեալ են անխնամ: Ի այց սոյն Սուրբ Աշան շնորհիւ իւրով ինքնին ազատեալ է ի գերչաց իւրոց, քանզի յետ տանելոյ նոցա զսանդ, անկեալ ի մէջ գեղջ և Աթոռոյն զօրեղ մահտարաժամ մի, և երկուցեալ գերողացն առաքեն ի Փառաքար գիւղն զայս Սուրբ Աշան, և անդ սկսեալ մահտարաժամն, տեսլեամբ յայտնեալ ծերունւոյն միոյ, մինչ ոչ տարցեն զիս ի տեղե իմ, ուր կարօտքն իմ հսկեն անդար, ոչ լինի դադարումն փորձութեան գաւառացն այսոցիկ: Մերունին պատմելով բազմաց, վճռեն հանդիսաւոր պատուով, որպէս զտապանակն առաջին, բերեալ յանձնեն անապատաւորացն և ապա լինի զբաւ մարդածախութեանն այնմիկ:

Ելլ առաւել քան զսոյն հրաշագործութիւնսն Սուրբ Աշանիս, ասացեալ է զկնի Միթար Այլիկոպոսի պատահել

դիպուածոց և ելուզակացն, որք ի պատար-
ռիլ սառինն ընկղմեցան որպէս կապար ի
ծոզն Աէվանու:

Ըստ պատմութեան ծերունի միարամ
Օրոտեցի Մկրտիչ վարդապետի, Բժնի
զեղջ Տանուտէր Յօհանի որդի Վրիգորն
անողջանալի ցաւով իրր հոգևոր անկեալ
ի մահճի, զայս Սուրբ Աշանն ի ներկայա-
ցուցանել հոգևարք Վրիգորին, իսկ և իսկ
ի յուշ իւր եկեալ, և յերկրորդի օրն ըզ-
հետ վարդապետին յեկեղեցին Բժնւոյ
դպրութիւն արարեալ ի ժամ պատարա-
զին: Աւ զայս այսպիսիս հաւատարիմ
պատմողք բազումք են, մեք թողաք հա-
ւատով յուխտ և յերկրպաշութիւն մա-
տուցողաց, վասն զի ոչ հաւատն սպառի
յաշխարհէ, և ոչ խաչի զօրութիւն, ընդ
որում, եթէ է, միշտ ներգործէ:

Մեզ միայն է անլուծանելի, թէ՛ ար-
դեօք ուստի՞, երբ և ի ձեռն որոյ՝ այս
Եստուածային գանձն եկեալ իցէ յարժա-
նաւոր տուն և ի պատշաճ յարկ բնակու-
թեան իւրոյ, ուր պաշտի արժանաւոր
փառօք ի հարազատ սպասաւորաց իւրոց,
որպէս արարիչն իւր՝ յանմարմին հրեշ-
տակաց, և սա իրր յանմարմնացելոց մի-
անձանց:

Ձաւաստեալ ստուգեցաւ, զի երրորդ
Խոանն ընկերակց սոցա, է ի սահմանս
Հին-Նախիջևանայ, ի վանս Արնջակու
Սուրբ Կարապետի, որոյ առաջնորդն է
Մատթէոս Ապիսկոպոս՝ առ որ մնայ նո-
ւաստութեան իմոյ կիրք հոգւոյ, մինչ ի
գնալ յերկրպագութիւն և նմա:

Երրորդ՝ մասունք նշխարաց Արբոյն Յով-
հաննու Մկրտչի, զետեղեալ ի մջ ականա-
զարգ գեղեցիկ խաչի, և եղեալ ի մջ երկ-

փեղկեան արծաթեայ պատշաճ պահա-
րանի:

Չորրորդ՝ մասունք նշխարաց մեծի ա-
ռաքելոյն Պետրոսի, զետեղեալ ի խաչ
զրակոնդիկոն, կամ կիտուածայօրինեալ՝
ակամբք զարդարեցելոյ:

Հինգերորդ՝ մասունք նշխարաց Արբ-
ոյն Վէորգայ քաջամարտ զօրավարին, որ
է զետեղեալ ի վերայ գեղեցիկ արծաթա-
պատ Աւետարանի:

Վեցերորդ՝ երկու մասնատուփք արծա-
թեայ, յորոց միումն գոն երեք մասունք
մանր նշխարաց Յովհաննու Մկրտչի:

Եօթներորդ՝ ի մջ Չիփիշի գեղեցիկ
ձեռաց խաչի միոյ, մասն կենաց փայտի, ի
գոյնց՝ Եմասիոյ և Մարավանու Յովհան-
նէս Արքեպիսկոպոսին Սերաստացւոյ, ինձ
Մանուէլ վարդապետիս ժառանգու-
թիւն քնացեալ՝ ընդ բոլոր զրեանց իմոց,
և զայս Սուրբ Աշանն տեառնակիր ետու
յիշատակ Աէվանու Սուրբ Ենապատին,
ի 1830, Օգոս. 12. ձեռամբ հոգևոր որդ-
ւոյ իմոյ՝ Գաւիթ Ասկօրիչ Սուրենովի
Ղլիմեցւոյ:

Աւթերորդ՝ ևս նոյն Գաւիթ Սուրե-
նովի անուամբ յիշատակ ետու՝ մէկ փոքր
արծաթեայ տուփի մջ զետեղեալ սրբոյն
Վէորգայ մասն, հանդերձ մէկ արծաթեայ
մասնատփով, և արծաթեայ Մեռոնի
փոքր շեշով, որք և ի ցուցական ունին
յայտնել:

Իններորդ՝ երկու ապանոս Գաւազան,
փղոսկրեայ վիշապազլետովք, յիշեալ հան-
գուցեալ Յովհաննէս Արքեպիսկոպոսի և
իմ Մանուէլ վարդապետիս յիշատակ-
քըն աստ, և մէկ զերնոսեայ վիշապա-
ձև գլուխ գաւազանի, չորս զարճոթ նոր

շուրջառք, և երկու շտափայ սեղան ծածկոց ի գալն իմ աստ ձեռալ կարել ետու նոյնպէս յիշատակ:

Ըստ որում ի գալն իմ աստ ի Սուրբ անապատն Աէվանու, սոյն ի ներքոյ նշանակեալ թիւ, Յուլիսի մէկէն, ոչ գտի զանցելոց պատմութիւնսն սոցա, ուրիք յօրագրութիւնսն գրեալ, առաջագրութեամբ ներկայառաջնորդ հեղաբարոյ Յովհաննէս վարդապետի՝ աշխատասիրեցաք ձեռամբ մեր գրել՝ մեզ կարեւոր եղեալսն մինչև աստ: Յետ այսորիկ յանձնեցաք նախայիշեալ Ընտոն շնորհունակ արեղային Տփխիսեցւոյ՝ գրել զանօթսն յետ Արբութեանց, զանշարժ կալուածոց զամրագիրսն, և ըզբոլոր մատենից զցուցակսն, ըստ իմ կարգադրութեան:

Քանզի վասն ծերութեան և սկաբութեան խոյ, մնացելոցն ներումն խնդրեալ ի հարց և եղբարց՝ աստ աւար ուսմն արարի բանից իմոց:

Մատնագրոյն թատայ Սանտէլ
Վարդապետ Էւանու Աւիշիտի:
1830. Սեպ. 12.
Ի յանապատն Աէվանու:

(Սանտէլ է յարգոյն):

ԲԵՆԻՍՄԻՆ ՅԻՍԵԿԼԻՆԻ

ԿԵԱՆՔԸ.

(Շարժանութիւն):

Բ.

ՄԱԼՈՐՈՒԹԻՒՆՔԸ.

Եւթմ պէտք է, որ Յրանկլինի մոլորութեանց վրայ ևս հաշիւ տանք. թէև ի բոլոր սրտէ զնա սիրելով կը գանկայինք

անտես թողնել զանոնք, բայց ճշմարտութիւնն աւելի կը սիրենք, որին որ ամենքս հետեւելու պարտաւոր ենք: Բացի այդմանէ մեզ կը թուի, որ անխոհեմ վարուած կը լինէինք, եթէ Յրանկլինի պէս անձնաւորութիւնը մը միայն մի կողմէն դիտելու ուզենայինք: Այս ազնիւ մարդս ճշմարտութեան լուսէն երկիւղ չունի, ուստի վստահ ենք, որ չը՛յայելով իր քանի մը թերութիւններուն, նա միշտ կիմանայ գրաւել հոգով իրեն համատիպ անձանց ուշադրութիւնը և բարի զգացմունք յարուցանել սոցա սրտի մէջ:

Ասկսենք հաշիւն առանց դանդաղելու և զիտենք, որ դժուար չի լինիլ, քանզի Յրանկլին իր խոստովանութեամբ ևս մարդիկներուն շահ մը մատուցանելու համար՝ սխալներն ինքն իր ձեռքով արդէն պարզ գրած է:

Արբը պատմուած կերպիւ լրագրի համար գրելն առ ժամանակ շարունակելէն ետքը Յրանկլին վերջապէս յայտնեց եղբօրը, թէ ով էր անձանօթ հեղինակը: Եւս իմանալով Ձեմն թէև փոխեց իր կոպիտ վարմունքը, սակայն կարճ միջոցէն յետոյ վերստին սկսաւ առաջուայ պէս բռնօրէն չարչարել զնա, այնպէս որ Բենիամին շատ անգամ հօր առջև գանգատելու ստիպուեցաւ և վերջապէս իր ճնշողական վիճակին աւելի երկար յամբերել չըկրնալով՝ վճռեց որպէս և իցէ ազատուելու եղբօր ձեռքէն: Բայց ինչպէս, պայմանագրի տակ ստորագրուողը միթէ ինքը չէր:

Եւթ միջոցին լրագրի յօդուածներէն մին կառավարութեան տհաճութիւնը յարուց. Ձեմն Յրանկլին՝ իբրև տնօրէն